

Անիի Կաթողիկե Մայր Տաճարը, կառուցված Տրդատ ճարտարապետի կողմից 989—1001 թ. թ.:

Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՄԱՏՅԱՆ

Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմության արխիվում հայ ժողովրդի հեռոսական, բազմաբովանդակ ու հարուստ պատմությունն ամփոփող հազարավոր կարևոր փաստաթղթերի հետ պահվում են երկու արժեքավոր գործեր՝ Անի քաղաքի ավերակների այցելուների տպավորությունների երկու մատյան։ Բազրատունիների հռչակավոր մայրաքաղաք Անիի բազմախոսուն ավերակները դարերի ընթացքում գրավել են ճանապարհորդների և առանձին մասնագետ-ուսումնասիրողների ուշադրությունը։

Մինչև 1918—1920 թվականների ծանր դեպքերը, ինչպես հայտնի է, Անին իր շրջակայքով մտնում էր մեր Մայր Հայրենիքի սահմանների մեջ։ Դեպի պատմական ավերակ մայրաքաղաքը հնարավոր էր անցնել երեք ուղղությամբ՝ Ալեքսանդրոպոլից (Լենինականից) կառքով 35—40 կիլոմետր բնահողային քարքարոտ վատ ճանապարհով, կամ Աղինի երկաթուղային կայարանից, որը գտնվում էր ավերակներից մոտ 12 կիլոմետր հեռավորության վրա, և վերջապես Անի կայարանից 6—8 կիլոմետր հեռավորությամբ, հետիոտն կամ սայլով։

Շիրակում Անիի թագավորության բարգավաճման ու շեն տարիներին, այն կապված է եղել, Ախուրյան գետի ձախ ափով, մի քանի հոյակապ կամուրջներով։

Դարերի արհավիրքներից քանդված մեծ կամուրջի մնացորդներ են մնում Անիի մոտակայքում։

Աշոտ Ողորմածի (963—977) թագավորության տարիներին, 964 թվականին, կառուցվեցին քաղաքի առաջին, այսպես կոչված Աշոտյան պարիսպները։ Այս պարիսպների մեծագույն մասը պեղվել են 1893 և 1904 թվականներին։ Աշոտյան պարիսպների կառուցմամբ Անիի սկզբնական մասը, որի մեջ մտնում էր և Անիի պատմական միջնաբերդը, ստանում էր քաղաքի տեսք։

1963 թվականին լրացավ Անի քաղաքի հիմնադրման հազարամյակը։

Աշոտ թագավորի հաջորդ Սմբատի (977—990) ժամանակ է՛լ ավելի է զարգանում քաղաքի շինարարությունը, նրա սահմանները մեծանում են պարիսպներով, աշտարակներով, հրակնատներով և այլ ամրություններով։

Անին մի մեծ, անգնահատելի բացօդյա թանգարան էր, որի գոհարներն էին Կաթողիկեն, Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցին, Հովվի եկեղեցին և այլն։ Ըստ պատմական տեղեկությունների, հրաշակերտ Մայր Տաճարի հիմքը դրվել է Սմբատ թագավորի կողմից 989 թվականին։ Կառույցի շինարարությունը շարունակեց Գագիկ թագավորի կինը՝ Կատրամիդե թագուհին։

Թե՛ իր չափերով, թե՛ իր վեհությամբ ու սքանչելի քանդակներով ու փորագրություններով, առանձին տպավորություն է թողնում Կաթողիկեն։ Նրա մեծ գմբեթը զարդարված էր մի մեծ արծաթյա խաչով, որն ըստ ավանդության բերված է եղել Հնդկաստանից։

Սկիզբ ՀԽՍՀ վիպասաց Ջիջոյի փայտանձուկ վիշապաքարի ծայր վիմակ:



Անիի պարիսպները հյուսիս-արևելյան կողմից: Հեռվում՝ Կաթողիկեն և միջնաբերդը:

Դմբեթը, ըստ եղած տեղեկությունների, վնասվել և խորտակվել է 1319 թվականի մեծ երկրաշարժից: Բարեբախտաբար մեզ հասել է շինարարության ժամանակակից Ասողիկ պատմագրի կարևոր վկայությունը, որ Կաթողիկեն կառուցվել է «ի ձեռն ճարտարապետի Տրդատայ, որ զԿաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինայի»[1]:

Կաթողիկեի աշխատանքները վերջացնելուց հետո, Տրդատը անցնում է մի այլ կարևոր աշխատանքի՝ Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու շինարարությանը: Ըստ պատմագիրներից հասած վկայությունների (Ասողիկ, Սամվել Անեցի), Գագիկ Ա Բագավորը իր Ս. Գրիգոր եկեղեցին պատվիրել է կառուցել Ներսես Տայեցու կողմից կառուցված Զվարթնոցի եկեղեցու օրինակին համապատասխան[2]:

1036 թվականին կառուցվել է Ս. Փրկիչ եկեղեցին:

Միայն 1905—1906 թվականներին կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին Գագիկ Ա Բագավորի կողմից 1001—1015 թվականներին կառուցված կլորակ հոյակապ տաճարի փլատակները: Այդ եկեղեցին, ինչպես նշեցինք, Զվարթնոցի՝ է դարի հայ ճարտարապետության հոյակապ կոթողի ընդօրինակությունն էր:

Այդ կարևոր հուշարձանը կառուցողը նույն ժ—ԺԱ դարի հռչակավոր Տրդատ ճարտարապետն էր: Գագկաշենի ավերակների պեղման ընթացքում հայտնաբերվեց Գագիկ Բագավորի մոտ 2,3 մետր բարձրությամբ արձանը: Արձանում Գագիկը քանդակված է իր ամբողջ հասակով, Բագավորական արևելյան վերնազգեստ-խալաթով և խալիֆի կողմից նվիրված փակեղ-չալմայով:

Դարեր շարունակ ճարտարապետական և պատմական արժեք ներկայացնող Անիի անզուգական գոհարների պահպանման խնդիրը եղել և մնում է կարևոր հարց: Այն, ինչ պահպանվել է դարերի ահավոր արհավիրքներից, միշտ ենթակա է եղել ավերակ քաղաքի շրջակայքի բնակչության ավերմանը: Դրությունը չփոխվեց նաև 1877—1878 թվականների ռուս-տաճկական պատերազմից հետո, երբ Կարսը և նրա մարզը, որի մեջ էր մտնում Անին, միացվեցին Ռուսաստանին: Անին ու նրա շրջակայքը մնում էին անուշադրության մատնված և շրջակա քուրդ բնակչության համար ծառայում էին որպես արոտատեղ, պետության կողմից օգտագործվելով ինչպես բահրատու հողված (оброчная статья): Միայն անցյալ դարի ութսունական թվա-

[1] Ստեփաննոսի Ասողկան Տարօնեցւոյ, «Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1885 թ., գլուխ Ա, էջ 185—187:

[2] Սամուէլի Կաճառեցւոյ Անեցւոյ, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 104:



Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ավերակներն արևելյան կողմից:

կաններին, երբ Անիի ավերակների հսկողությունը հանձնվեց էջմիածնի հոգևոր իշխանությանը և Գևորգ Դ Կաթողիկոսի կարգադրությամբ այնտեղ կազմակերպվեց վանահայրություն, սկիզբ դրվեց հուշարձանների, չնայած անբավարար, հսկողությանը և պահպանմանը: Նոր կազմակերպված Ալեքսանդրոպոլի (Լենինականի) հոգաբարձության ջանքերով կառուցվեց մի քանի սենյակից բաղկացած շենք («միաբանություն)՝ այցելուների և ուխտավորների համար: Հետագայում այդ և նման համեստ իրագործումները մեծ նշանակություն ունեցան Անիի ավերակների պահպանման և նրանց գիտական ուսումնասիրման համար:

Ինչպես տարբեր տարիներին քաղաք այցելողները իրենց բազմաթիվ գրառումների մեջ, այնպես էլ Լեոն իր «Անի» աշխատության մեջ ավերակների պահպանման գործում հատկապես նշում են մի երախտավոր մարդու՝ Անիի վանահայր Միքայել վարդապետ Տեր-Մինասյանի անունը:

Մեր պատմական անցյալին գիտակ, պատմական հուշարձանների պահպանման գործին նվիրված այդ համեստ վանականը, սկսած ԺԹ դարի վերջերից մինչև. 1920 թվականը, չորս կողմ տիրող ամայության մեջ, ամառ ու ձմեռ, հաճախ օրվա հացի կարոտ, եղել է ավերակների անընդմեջ պահապանը, խնամողը, այցելուների ուղեկիցն ու բացատրությունները տվողը:

Միայն 1891—1893 թվականներից սկսած և հատկապես 1904—1917 թվականներին, ավերակների ուսումնասիրման գործը դրվեց գիտական հիմքերի վրա, երբ ակադեմիկոս Ն. Յա. Մառի[3] նախաձեռնությամբ սկսվեցին պեղումները, որոնց տարբեր ժամանակներում մասնակցել են նաև Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Սմբատ Տեր-Ավետիսյանը, Տարագրոսը, Աշխարբեկ Քալանթարը, Տոկարսկին և ուրիշներ:

Պատմական ողբերգական դեպքերն արգելք հանդիսացան Մառի և նրա աշակերտների երազանքի՝ «Անիի հնագիտական ինստիտուտ»-ի կազմակերպման իրականացմանը:

[3] Ականավոր գիտնական, լեզվաբան ու հայագետ Նիկոլայ Յակովլևիչ Մառը (1864—1937 թ. թ.) մեծ վաստակ ունի Անիի հնությունների ուսումնասիրման գործում:



Անիի վանահայր Սիքայել վարդապետ Տեր-Միհնասյանը (վերևում, ձախից 2-րդը) մի խումբ այցելուների հետ:

Ըստ ակադեմիկոս Ն. Յա. Մառի, Կովկասը կարող է պարծենալ ոչ միայն այն զարդերով ու գանձերով, որոնցով օժտել է նրան բնությունը, այլև «ներանցից լավագույններին հավասար, Կովկասը կարող է պարծենալ Երկնքի մի կուլտուրական պարգևով՝ Անիի ավերակներով, հնագիտական պսակի յուր այդ խոշոր մարգարիտով»[4]:

Այդ տարիներին Անիում կառուցված մի քանի շենքերից հատկապես պետք է նշել Ն. Յա. Մառի անմիջական նախաձեռնությամբ կառուցված թանգարանի շենքը, որտեղ, հնարավորության սահմաններում, տեղադրվեցին շատ կարևոր մասունքներ, դրանով իսկ փրկվելով անխուսափելի կորստից:

Անիի ավերակները տեղավորված են մի հռանկյան վրա, որտեղ հատվում են Ախուրյանի և Անիի (Ալաջայի) խոր կիրճերը և զրաղեցնում են մոտ 160 հեկտար տարածություն: Այդպիսով, քաղաքը երեք կողմից խոր ձորերով է շրջապատված, որով և ժամանակին անմատչելի էր թշնամիների համար: Հյուսիսից քաղաքը եզրափակում են հոյակապ Սմբատյան պարիսպները, որոնց բեկորները դեռ այսօր էլ առանձին մասերում կանգուն են և թողնում են զարմացնող տպավորություն: Պարզ է, որ այդպիսի մեծ քաղաքը պետք է ունենար և՛ խմելու, և՛ ոռոգման ջուր: Հիմնական ջրատարները գալիս էին Ալաջայի և Սուգովթլուչի ստորոտներում երևան եկող աղբյուրներից: Պեղումները կատարելիս, հայտնաբերվեցին հնագույն փողոցների հետքեր և ջրմուղի խողովակներ, ըստ որում վերջիններս մի շարք վայրերում:

Բացի բացօդյա Անիից, գոյություն ունի նաև «ընդգետնյա Անի», որի շուրջը հյուսվել են մի շարք ասույթներ, ավանդություններ: Քաղաքի տակ գտնվող անցքերը ժողովրդի մեջ ստացել են «Գեղան գելմազ» («Գնացողը հետ չի գա») անունը: 1901 թվականի հուլիսի 29-ին Անի են այցելում երկաթուղու մի շարք ինժեներներ, Ալեքսանդրոպոլի գծի տեղամասի պետի տեղակալ Իվան Պանովի գլխավորությամբ: Նրանք հատուկ պատրաստությամբ, զինվելով ացետիլենի լապտերով և այլ հարմարություններով, մեծ դժվարություններով անցնում են մինչև վերջին մեծ ստորասրահը, որտեղից անցնում են տարբեր ուղղությամբ ճյուղավորված ստորանցքերը, որոնց երկարությունը հասնում է մինչև 960

[4] Հ. Օրբելի, «Անվո ավերակները», Թրմնի, ռուսերենից Հուսիկ արքեպիսկոպոսի, Վաղարշապատ, 1911 թ., էջ 54:



Անիի ալրերի ընդհանուր տեսքը Ծաղկաձորից

մետրի։ Իր գրառման մեջ (գիրք 1, թերթ 3) Պանովը նշում է, որ ըստ իրենց կարծիքի, նրանք առաջինն են, որ տալիս են հիշյալ գետնանցքերի իրական նկարագիրը և նշում են, որ քարանձավները ներկայացնում են պատմական մեծ հետաքրքրություն։

Տարեցտարի ավելի էր մեծանում հետաքրքրությունը դեպի Անին, դրան զուգահեռ ավելանում էր նաև ավերակները այցելողների թիվը։ Այցելում և վերոհիշյալ մատյաններում իրենց տպավորություններն էին գրի առնում ոչ միայն մոտակա Շիրակի, Ջավախքի, Լոռու հայ շինականներն ու մտավորականության մեծաթիվ ներկայացուցիչները, այլև Անիի ավերակներից ստացած իրենց ցնցող տպավորություններն էին թողնում այնտեղ ռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ և մեծ թվով օտարերկրացիներ։

Մատյաններում բանաստեղծությամբ, արձակ ձևով, երփնանկարներով և այլ կերպ, անկախ ազգությունից, զբաղմունքից ու դիրքից, իրենց հույզերն են թողել հայ գաղթականն ու եվրոպացի մեծահռչակ գիտնականը, ռուս զինվորականն ու մտավորականը։ Մատյաններում կարելի է գտնել Իսահակյանի, Թումանյանի հոգեխառն խոսքերը, Պ. Պռոշյանի հակիրճ, բայց բովանդակալից երկտողը և ուրիշ շատ անվանի մարդկանց ստորագրությունները։ Նրանք բոլորն էլ հիացմունքով ու ափսոսանքով են խոսում հայ ժողովրդի հիասքանչ քաղաքամոր փառավոր անցյալի ու անփառունակ ներկայի մասին։

Անիի ավերակների այցելուների տպավորությունների առաջին մատյանը (Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմության արխիվ, ֆոնդ 57, գործ 704) բաղկացած է 123 թերթից։ Մատյանում առաջին գրառումը կատարվել է 1901 թվականի հունիսի 15-ին, վերջինը՝ 1906 թվականի սեպտեմբերի 16-ին։

Երկրորդ մատյանում (նույն արխիվում՝ ֆոնդ 57, գործ 705) գրառումները կատարվել են 1908 թվականից մինչև 1913 թվականը։ Ցավոք, մնացյալ ժամանակաշրջանի գրառումները մեզ չեն հասել։ Գրառումների որոշ մասը գունաթափվել է և դժվարընթեռնելի է։

Գրառումներից տեղեկանում ենք, որ 1901 թվականի հուլիսի 20-ին էջմիածնի Գևորգյան ճեմարանի սաների հետ Անի է այ-

ցելել Գ լսարանի ուսանող, հետագայում ականավոր երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը։

14 հոգուց բաղկացած մի խմբով 1902 թվականի հուլիսի 19-ին, ավերակները այցելության են եկել Արամայիս Երզնկյանը (1879—1938), որ հետագայում եղել է Խորհրդային Հայաստանի հողժողկոմ ու ժողկոմխորհի նախագահի տեղակալ, Դանուշ (1882—1938) և Ալեքսանդր (1878—1938) Շահվերդյանները, Ռուբեն Դաշտոյանը (1879—1938),— հետագայում ականավոր սովետական և պարտիական գործիչներ,— Նիկողայոս[5], Հայկանուշ և Նատալիա Շահումյանները և ուրիշներ (նույն արխիվում, նույն ֆոնդում, գործ 704, թ. 29)։

1903 թվականի մայիսի 26-ին Անի է այցելել հայ դերասանների մի խումբ՝ անմահ Սիրանույշի գլխավորությամբ, որոնք, ի դեպ, իրենց միջոցներով, տեղում պատրաստել են տվել Անիի Մայր Տաճարի համար մի փայտյա դուռ, որի կարիքը խիստ զգացվել է։ Նույն թվականի հունիսի 27-ին Անի է այցելում «մշակյաններ»-ի մի խումբ, որոնց թվում Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, ականավոր հայագետ Գրիգոր Խալաթյանը, բազմավաստակ պատմաբան Առաքել Բաբախանյանը (Լեո)[6], «Մշակ»-ի խմբագիր Ալեքսանդր Քալանթարը և ուրիշներ։

1903 թվականի օգոստոսի 22-ին Անի են այցելում Պարսկաստանում ֆրանսիական գիտական պատգամավորության կցորդը[7] և ուրիշներ։

1909 թվականի հունիսի 25-ին Անի են այցելում Մաթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսը (1845—1910), ականավոր հրապարակախոս և բանաստեր Մինաս Չերազը (1852—1929) և կաթողիկոսին ուղեկցող այլ անձինք։ Կաթողիկոսը նկարվում է Բագրատունյան Գագիկ թագավորի պեղումներից հայտնաբերված արձանի մոտ։

Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսը Անիում, Գագիկ Բագրատունի թագավորի արձանի մոտ։

1911 թվականի հունիսին Անի են այցելում Մոսկվայի Լազարյան ճեմարանի սաները, այնուհետև Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի ուսուցիչների և աշակերտների 20 հոգուց բաղկացած մի խումբ, այդ թվում Խաչատուր և Եղիա Չուբարյանները։

1912 թվականի օգոստոսի 23-ին տպավորությունների մատյանում իր ինքնագիրն է թողել մեր մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը։

1913 թվականի սեպտեմբերի 29—30 Անի է ժամանում և մանրամասն ուսումնասիրություններ կատարում ավստրիական ականավոր գիտնական, պրոֆեսոր Ստրժիգովսկին (1862—1941), որը դերմաններեն թողել է իր գրառումը, որի տակ Ստրժիգովսկու հետ ստորագրել են Թ. Թորամանյանը և Լևոն Լիսիցյանը[8]. Ստրժիգովսկին, հիմնվելով Թորոս Թորամանյանի հին հայկական ճարտարա-

[5] Նիկողայոս (Նիկո) Շահումյան (1880—1908), Ստեփան Շահումյանի ավագ եղբայրը, հասարակական գործիչ։

[6] Ինչպես հայտնի է, այդ այցելությունը առիթ դարձավ Լեոյին գրելու իր հանրահայտ «Անի» աշխատությունը։

[7] Ստորագրությունն անընթեռնելի է։

[8] Լևոն Լիսիցյան (1892—1921), բանասեր Ստեփան Լիսիցյանի որդին, որը գործուն մասնակցություն է ունեցել Ստրժիգովսկու աշխատանքներին։ Զոհվել է Վաղարշապատում, 1921 թվականի քաղաքացիական կռիվների ժամանակ։

պետության ուսումնասիրությունների վրա, 1918 թվականին հայ ճարտարապետության ու նրա փոխազդեցությունների մասին վիեննայում հրատարակել է երկհատոր արժեքավոր ուսումնասիրություն[9]:

Անի այցելուների տպավորություններ մատյաններում թողած հարյուրավոր գրառումներից այստեղ ժամանակագրական կարգով ուշադրության ենք ներկայացնում մի փոքր մասը: Օտար այցելուների ֆրանսերեն և իտալերեն տեքստերը թարգմանել է վ. Դարբասյանը:

1

23 հուլիսի 1901 թ.

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ԱՌԱՋ

Օ՜ փլատակներ, սև ավերակներ,
Երազ օրերի տխուր վկաներ,
Ասացեք, ո՞ւր է մեր փառքն նախկին,
Ո՞ւր է Շիրակի մեր հին թագուհին:

Ո՞վ զրկեց նորան գանից հարազատ,
Տապալեց մանվան մոայլ խորխորատ.
Ո՞ր անգութ ձեռք խորտակեց իսպառ
Հայի օրորանն այս հրաշավառ:

Ո՞ւր են վաղեմի շքեղ պալատներ,
Մեր հանդակազարդ աճքիվ տաճարներ.
Մի՞թե միշտ նոքա կմնան կործան,
Կմնան, իբրև փառքի մաճարձան:

Բայց, ավերակներ, է՞ր չեք բարբառում,
Սգավոր պոեմին է՞ր չեք սփոփում:
Մի՞թե միշտ ձեր տեղ, փլատակների մեջ,
Բուերը պիտի ձայնեն միշտ անվերջ...:

Հարութիւն Թումանեան[10]

(Դիրք 1, թ. 2)

2

3 օգոստոսի 1901 թ.

ԱՆՑՈՐԴԻՆ, ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՄՈՏ

Միթե՞ երբ այդպես լալաճառաչ,
Ո՞վ դու անցորդ պատանի,
Հուզես, ճեծես ու լալականչ
Ձայնես, ա՜խ Անի, ջա՜ն Անի...:

Հովճաննես Շիրակունի (Շիրակեցի)
Աշակերտ Թփխիսի դպրանոցի

(Դիրք 1, թ. 5)

3

3 օգոստոսի 1901 թ.

Փա՜ռք ու պատի՜վ հայրենիքի քաջակորովներին, որոնք ստեղծագործեցին Անու անխորտակելի ամրոցը:

Ուսուցիչ Կ. Զկռնիա
(Թարգմանություն ռուսերենից)

(Դիրք 1, թ. 5)

[9] Josef Strzygowski, „Die Baukunst der Armenier und Europa", Wien 1918.

[10] *Հարութիւն Թումանյան (1869—1943), ազուխեցի, բանաստեղծ:*

4

20 օգոստոսի 1901 թ.

Օգոստոսի 20-ին, երեք ընկերներով այցելեցինք հնության նշանավոր հուշարձան հիասքանչ Անի քաղաքը և հիացանք նրա գեղատեսիլ և հոյակապ ավերակներով: Ինչպիսի՜ տեսարաններ, ինչպիսի՜ բանաստեղծություն: Մեզ շատ դուր եկան հյուրանոցի մոտի հոյակապ և վեհաշուք Մայր Եկեղեցին և խրոխտ աշտարակը՝ իր մավրիտանական սյունաշարով, որտեղ գիշերեցինք:

Ա. Ստաղլինի
(Թարգմանություն իտալերենից)

(Դիրք 1, թ. 9)

5

31 մայիսի 1902 թ.

Անցած դարերի վեհությունը և հայերի հպարտությունը դժբախտաբար այսօր ներկայացնում են միայն ավերակներ:

Իշխան Ն. Ս. Զիկովանի
(Թարգմանություն վրացերենից)

(Դիրք 1, թ. 22)

6

3 հուլիսի 1902 թ.

Ի ԴԻՄԱՑ ԱՆՎՈ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ

Օ՜, դու Անի, հայոց փառաց կենդանի վկա.
Տեսեր ես դու շատ ու շատ հայ արվա,
Այժմ թափուր է արվայիցդ հզոր գահ,
Կարոտ հայ սիրտը շտապով ճեզ կգա:

Համբուրելով ամեն մի սուրբ հար,
Հիշատակդ սրտումը կպահե դարե դար,
Արտասվելով պատելով սարե սար,
Բայց իրեն մեջը գտնում է անհնար:

Եկող այցելուին կարոտն կհագեցա,
Տխուր տպավորության տակ կհեռացա,
Քո հիշատակն միշտ սրտում կունենա,
Հավիտյան ցավելով, հավիտյան սգալով:

Նույն բանը պատահեց և ինձ այցելուիս,
Բագրատունյաց նվիրական բեկորները
տեսնելիս,
Այժմ հագուրդ իմ ցանկացած սրտիս,
Հեռանում եմ, լալով ու ողբալով:

Միհրան Մկրտիչեան (Պայպուրտեցի)

(Դիրք 1, թ. 25բ)

7

4 հուլիսի, 1902 թ.

• Անի՛,—սանսկրիտ,—մայր լեզվից է բխել, և կրա՛կ, հո՛ւր կնշանակե։ Կրակի դիցուհի, և թող նա, պանծալի Անին, լինի անշեջ հուր հայության սրտում վառելու և բորբոքելու ազատության սերը և լինի մեր վերածննդության ֆենիքսը, թո՛ղ այրվի, վառվի հայության սիրտը, իսկ ի՛նչ որ այրվում է՝ նաև լույս ունի։— Հավատա՛նք, որ լուսավոր են լինելու մեր գալիք օրերը, մեր նոր կյանքը...։

Ավետիք Իսահակյան

(Գիրք 1, թ. 26բ)

8

7 հուլիսի 1902 թ.

Լուսնյակ հիանալի մի գիշեր հասնելով Անի, առավոտյան կարծեցի, թե գտնվում եմ հրավառության մի աշխարհում։ Ողողված արևի ճառագայթներով, Անին ինձ վրա թողնց այնպիսի խոր ու ողբերգական տպավորություն, որ ես վերապրեցա հայ ժողովրդի անցյալը, ես թափեցի կարեկցության և զմայլանքի արտասուքներ այն մարդկանց համար, որոնք իրենց անկախության և քրիստոսի կրոնի սիրույն, կանգնեցրին այս տաճարները՝ այդքան խստաբարո, ջինջ և իդեալական դծերով, այն հոյակապ պարիսպները, որոնք կարծես արհամարհում են ամեն տեսակ հարձակումներ։

Անիից հեռանում եմ սրտումս մի աղոթք պահելով այս հին հայերի սերունդների համար, որպեսզի Աստված նրանց պարգևի արժանի մնալ իրենց նախնիքներին՝ իրենց քրիստոնեական և ընտանեկան առաքինություններով։

(Ստորագրությունը անընթեռնելի է)

(Թարգմանություն ֆրանսերենից)

(Գիրք 1, թ. 27)

9

25 հուլիսի 1902 թ

Ես շատ եմ լսել այս հինավուրց քաղաքի մասին, շատ բանի չէի հավատում։ Դիտելով այն, ես հավատացի այն հիասքանչ և զարմանալի քաղաքի հարուստ և մեծահռչակ հինարարների անցյալին։ Իրոք կարելի է ողրալ նրա ավերակները։ Ամեն մի քարը խոսում է և նրան հարկավոր է հասկանալ։

Բ. ե. Զեդգինիձե[11]

(Թարգմանություն ռուսերենից)

(Գիրք 1, թ. 32)

[11] Բ. ե. Զեդգենիձե, էջմիածնի գավառային բժիշկ։

10

19 օգոստոսի 1902 թ.

Երբ այրում միայնակ նստած,
Անցնում էին ժամերը ձանձրացած,
Տեսնում էի կործանված վանքի պատերը,
Եվ նորա շուրջը կանգնած իմ ընկերները:

Տխուր ու տրտում սև օր է պատել,
Մեր սրտի վերա վերհեր են դիզվել,
Անի, ե՞րբ պետք է լինի ֆո վերաճորոգումը,
Որ մեզանից հեռանան այս սև օրերը:

Թող չխրեն հայերը վհատությամբ,
Թե կկորչենք մենք հավիտյան.
Կգան օրեր ուրախության
Ու մենք էլ կցնծանք հավիտյան:

Այսուհետև ամեն մի հայ
պարտականությամբ,
Թող աշխատի միշտ անդժգոհությամբ,
Թող շարե իր կրծքին բերը ծաղրության,
Գործե սուրբ գործը միշտ միությամբ:

Անա մոտենում են ուրախության օրերը,
Մեր աշխատանքի զուտ արդյունքը,
Այն սուրբ ճանապարհների արյունը
Կրողոքե առ Աստված հայ անունը:

Հ. Խրխրեանց

(Գիրք 1, թ. 34)

11

15 մայիսի 1903 թ.

Անկասկած Պարսկաստանի հետ հարևանության պատճառով նախկին Հայաստանի սուրբ մայրաքաղաքը արժանացել է հազար ու մեկ եկեղեցիների քաղաքի մականվան. այդ թիվը Շահերաղադեի իշխանուհու բերանով նշանակում է անհամար։ Տասնչորսերորդ դարից սկսյալ, թուրքական և մոնղոլական ավերածությունները, ինչպես նաև երկրաշարժերը շատ բան ոչնչացրին, բայց և այնպես տաճարների և շենքերի այնքան շատ ավերակներ են մնացել, որ ոչ տարերքը և ոչ էլ մարդիկ երբեք չեն կարողանա կործանել այդքան հոյակապ, պատկառելի, հայերի հավատքի վկա այս սրբարանը։

Լուիզա Մոնշոտի

(Թարգմանություն ֆրանսերենից)

(Գիրք 1, թ. 50)

12

26 մայիսի 1903 թ

Եկանք ուխտ Անի և գիտենալով եկեղեցիների սրբազան անոթներից բոլորովին զուրկ

լինելը, ընծայաբերեցինք Մայր Եկեղեցուն մի արծաթյա սկիհ, հույս ունենալով, որ ամեն մի այցելու իրան պարտք կհամարե անշքացած Անիի տաճարները ամեն կերպ զարդարելու։

Սիրանույշ[12], Մ. Ավետյան[13], Ագնիվ[14], Փառանձեմ[15], Ա. Վրույր[16], Մ. Աղայանց[17], Գր. Ավետյան[18], Անդրանիկ[19], Ա. Գոպյանց, Ա. Բերոյան[20], Բ. Հարությունյան։

(Դիրք 1, թ. 51բ)

13

7 հուլիսի 1903 թ.

Ահա գեթ ավերակներ, որոնք միայն քեկորներ և ավերակներ են, որտեղ մնացորդները ցույց են տալիս, թե նախկինում ինչ են եղել։ Դուցե Անին իր բարգավաճման ժամանակ երբեք այսքան գեղեցիկ, տպավորիչ չի եղել, քան այժմ և ժամանակը՝ այդ մեծ քանդակագործը, իր գործը կատարել է այնտեղ։ Այստեղ պետք է շրջագայել առանձնապես պայծառ լուսնով. պայծառ լուսնի ժամանակ, տեսարանը անմոռանալի է։

Մաղթենք, որ հնագետները քարուքանդ չանեն այդ ավերակները։

Ֆրանսիական բանակի ինժեներ, կապիտան
(Ստորագրությունը անընթեռնելի)
(Թարգմանությունն ֆրանսերենից)

(Դիրք 1, թ. 53)

14

27 հունիսի 1903 թ.

Մեծ ցավերն անխոս են...

Տիգրան Չավեն[21]

Քարերն անգամ խոսում են։

Գր. Խալաթյանց[22]

Այո, բայց խոսքից ավելի գործ է հարկավոր մեզ պես ժողովրդին։

Ա. Բաբախանյան[23]

Անին մի մեծ գիրք է, դեռ լավ չի կարդացված և ուսումնասիրված, մի գիրք, որ պարունակում է հարուստ նյութ հայոց անցյալ կյանքի թե՛ քաղաքական և թե՛ կենցաղավարական, տնտեսական և առհասարակ երկրի կուլտուրական և աշխարհաշինական ընդունակությունների։ Անիի ուսումնասիրությունը ընդարձակ ծրագրով առաջիկա ապագայի գործն է։ Ահա այն տպավորությունը, որ ինձ վրա թողեց Անին երեք անգամ այցելություններիս միջոցին։

Ալեխանդր Քալանթար[24]

(Դիրք 1, թ. 62)

15

22 օգոստոսի 1903 թ.

Հրաշալի ավերակներ։ Կմաղթեմ, որ խիստ շատ շտապող գիտնականները չկործանեն նրանք և նվիրաբերեն իրենց քանաստեղծությունը։

Բոնդուր, արտիստ, նկարիչ, Փարիզ[25]
(Թարգմանությունն ֆրանսերենից)

Կցված լինելով ֆրանսիական գիտական պատգամավորությանը Պարսկաստանում,

---

12 *Սիրանույշ (Գանթարճյան Սերովդե) 1857/1862—1931), հայ մեծատաղանդ դերասանուհի։*

13 *Մարիամ Ավետյան (1881—1963), դերասանուհի։*

14 *Աղնիվ Անդրանիկ (1877—1960), ականավոր դերասանուհի։*

15 *Փառանձեմ (1864—1915), դերասանուհի։*

16 *Արամ Վրույր (Արամ Մինասի Մաքասճյան) (1863—1924), հայ ականավոր կատակերգու, խմբագրել և հրատարակել է «Հուշարար» թատերական, գրական-գեղարվեստական հանդեսը։ Նա միաժամանակ նվիրվել է Անիի ավերակների ուսումնասիրման և հատկապես նկարահանման գործին։*

17 *Մատթեոս Աղայան (1861—1932), դերասան, բեմ է բարձրացել 1879 թվականին։*

18 *Գրիգոր Ավետյան (Դյադյա Գրիշա) (1870—1926), ականավոր դերասան և թատերական գործիչ, Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասան։*

19 *Անդրանիկ (1873—1949), դերասան, ծնվել է Ադուլիսում, բեմ է բարձրացել 1890 թվականին, վախճանվել է Լոս-Անժելոսում։*

20 *Արտեմ Բերոյան (1878—1963), ականավոր դերասան։ Հիմնականում գործել է Թբիլիսիում։*

21 *Տիգրան Չավեն (Չուգասզյան) (1874—1919), հասարակական գործիչ, բանաստեղծ։*

22 *Գրիգոր Խալաթյանց (1858—1912), Մոսկվայի Լազարյան ճեմարանի բազմամյա պրոֆեսոր։ Մնվել է Ալեքսանդրապոլում (Լենինականում), բարձրագույն կրթություն ստացել է Մոսկվայի համալսարանում։ Ականավոր հայագետ։*

23 *Առաքել Բաբախանյան (Լեո) (1860—1932), հայ ականավոր հրապարակախոս, բազմահմուտ պատմաբան և բանասեր։*

24 *Ալեքսանդր Քալանթար (1855—1913), ականավոր հասարակական գործիչ, «Մշակ» թերթի երկարամյա խմբագիր։*

25 *Հիացած լինելով Անիի Մայր Եկեղեցու տեսքով, նա մատյանում գրչով նկարել է այդ անզուգական հուշարձանը։*

երկրորդ անգամ լինելով այցելեցի Անիի հրաշակերտ ավերակները։

(Մտորագրությունը անընթեռնելի)

Փարիզ

(Թարգմանություն ֆրանսերենից)

(Դիրք 1, թ. 74)

16

5 սեպտեմբերի 1903 թ.

Անիի ավերակների այցելությունից հետո ես ինձ հետ տանում եմ իմ կյանքի լավագույն հիշատակներից մեկը։ Ցավում եմ, որ բացակայում են անհրաժեշտ վերաբերմունք և խնամք՝ լավագույն ձևով պահպանելու հայկական անտիկ և հզոր քաղաքակրթության մնացորդները։

Վիտտորիո դի Մատտեա

Նեապոլից (Իտալիա)

(Թարգմանություն իտալերենից)

(Դիրք 1, թ. 38)

17

22 հոկտեմբերի 1903 թ.

Գնում էի էջմիածին նոր Վեհարանի շինության հատակագիծը կազմած լինելով, այցելեցի Անի՝ ուսումնասիրելու հայկական ճարտարապետությունը, որ պետք է ասած բավականին հետաքրքիր եղավ և նպաստեց իմ կազմած հատակագծին։

Ճարտարապետ Միսակ Տեր-Գրիգորյան

(Դիրք 1, թ. 38)

18

12/25 մայիսի 1904 թ.

Գտնվելով Անիում և հիանալով նրա վեհությամբ, նրբությամբ ու իր հիասքանչ ճարտարապետության ինքնուրույնությամբ, ակամայից ես սլացա դեպի մի ուրիշ, իտալական քաղաք, նույնպես կործանված՝ քան դար առաջ։ Ես մտքով տեսա Պոմպեյը՝ Վեզուվի զոհը և հրաբխի կործանարար գործը համեմատեցի մարդու կործանարար կատաղության հետ, որի զոհը դարձավ հիասքանչ Անին։ Սակայն ոչ մեկը և ոչ մյուսը չկարողացան ոչնչացնել նուրբ մշակույթի տեր ժողովուրդներին։ Իտալիան արդեն վերակենդանացավ։ Կմաղթեմ, որպեսզի շուտով գա այն օրը, երբ Հայաստանը կվերածնվի։ Այդ ժամանակ նրա ժողովուրդը կհանդիսանա նոր և շքեղ մշակույթի ջահակիրը Ասիայի բոլոր ժողովուրդների համար, որոնք այլևս ոտնձգություն չեն անի իրենց ազատարարին, գգալով և հասկանալով այլևս ոչ թե ազգային, այլ համամարդկային մշակույթի օգուտները։

Մասիմո Ֆոչե դե Մանտեֆֆել

(Թարգմանություն իտալերենից)

(Դիրք 1, թ. 77)

19

24 հունիսի, 1904 թ.

Ես էլ եկա, տեսի ու ողբացի այս դավթարի վրա։

Հ. Թումանյան

Մենք փառեր ունենք թաղված հողի տակ,
Մենք հույսեր ունենք պահած մեր սրտում.
Մի՞թե հավիտյան կողբանք ավերակ,
Մի՞թե հավիտյան կմնանք տրտում:

Հ. Թումանյան[26]

(Դիրք 1, թ. 83)

20

Քարերը խոսում են... Մի՞թե մենք խուլ կմնանք։

Պ. Պռոշյան

Ռուբեն Մանվելյան

(Դիրք 1, թ. 84)

21

5 օգոստոսի, 1904 թ.

Առաջին գալս էր 1868-ին երիտասարդության հասակում, իսկ երկրորդը՝ ծերության օրերում, 1904 թ. օգոստոսին։

Պետրոս Պռոշյան
Աննա Պռոշյան[27]

(Դիրք 1, թ. 80բ)

22

Առաջին անգամ գալիս եմ Անի, և խորհուրդ եմ տալիս ամեն մի հային տեսնել Անին, որպեսզի տեսնելով առաջվա հպարտ Հայաստանի ավերակները՝ կորչի Հայաստանում սերկուության հոգին և որ այս քանդված պալատները կենդանանան իրենց նախկին վեհությամբ։

Պապակ[28]

(Դիրք 1, թ. 90բ)

23

Անհուն խնդություն եմ վերապրում, որ ինձ էլ, մի անազատ կիսաստրուկին, ճակատագիրը պարգևել է մի ազատ գեղեցիկ օր և ցույց է տվել Բագրատունիների հռչակավոր

[26] Բանաստեղծությունից հետո, Հովհաննես Թումանյանի ստորագրության կողքին կա նաև ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանի ինքնագիրը։

[27] Աննա Պռոշյան, Պետրոս Պռոշյանի կինը։

[28] Պապակ, Պետրոս Պռոշյանի որդին։

մայրաքաղաքը։ Դժվար է արտահայտել այն բարդ զգացմունքները, որոնք տիրապետեցին իմ հոգիս, երբեմն հզոր և փառավոր ժողովրդի կործանված կյանքի մնացորդները դիտելիս։

Այդ և՛ թախիծ էր և՛ հիացմունք ու ուրախություն, որ ինձ վիճակվեց դիտելու այս փառավոր փլատակները։

Դիտելով դարերի ընթացքում այդպես զարմանալի կերպով պահպանված ամրություններ հզոր պատերը, ինձ թվում էր, որ անցյալ կյանքի հոգին դեռ մնում է այս ալեհեր բեկորների մեջ, որը ապրում, գուցե և ողբում է կործանված քաղաքությունը և ժողովրդի կորցրած ազատությունն ու ինքնուրույնությունը։

Մի՞թե այս ժողովուրդը չի վերածնվի, մի՞թե նա չի ունենալու իր նոր Անին։

Չեմ կարող չհայտնել իմ խորին զգացմունքներս Միքայել վարդապետ Տեր-Մինասյանին, իր սրտաբաց ընդունելության համար, նույնիսկ այնպիսի աննշան այցելուների հանդեպ, ինչպես տողերս գրողի՝ սովորական զինվոր-սոլդատին։ Երբ ես գալիս էի այստեղ, մտածում էի, որ ես հարկադրված կլինեմ ավերակները դիտելու անտարբեր, նույնիսկ թշնամական հայացքների տակ (չէ՞ որ ես զինվոր եմ և այն էլ ռուս)։ Սակայն ես հանդիպեցի ամենասիրալիր, սրտանց, իսկական արևելյան հյուրասիրության։

Ռուսական բանակի զինվոր
Միխայիլ Ռոմանով, Ալեքսանդրոպոլից
(Թարգմանություն ռուսերենից)

(Գիրք 1, թ. 92)

24

23 մարտի 1905 թ

Մանմեդական 1321 թվականին (1905 թ. 23/3)։

Ես, Կարսի էվվելաջամիի իմամ Օմարֆայխը էֆենդի Մուստաֆա էֆենդի Զադեն Անի քաղաքն այցելեցի, աշխարհում չտեսածս զարմանալի բաներն նայեցի և չափազանց վշտացա այն ազգի մասին, որ նորա թագավորների և ժողովրդի օգնությամբ խելք չհասնելու բաների վրա գործ (են դրել), գրած աշխատություններ (աշխատանք և) մի այսպիսի ամենահին քաղաք են շինել. ես աղաչում եմ Աստուծո, որ նորանց հիմնարկության ժամանակին գործ դրած աշխատություններ (աշխատանքները) զուր չանցնեն աշխարհից[29]։

(Հետևում է ստորագրությունը)

(Գիրք 1, թ. 107)

[29] Գրված է պարսկերեն, ապա հեղինակի կողմից տրված է հայերեն թարգմանությունը։

25

12 մայիսի, 1905 թ.

Բաշ-Կադիկլարի[30] գյուղական դպրոցի ուսուցիչ-աշակերտների մի խումբ այցելեցինք և ուսումնասիրեցինք Անի քաղաքի ավերակները։ Այցելությունը շատ օգտակար և բավարար էր, ինչին օժանդակել է Միքայել վարդապետ Տեր-Մինասյանի սիրալիրությունը և հյուրասիրությունը։ Սրտանց բոլորի կողմից նրան հայտնում ենք գրավոր շնորհակալություն։ Աշակերտների և մեր կողմից Հայաստանի հին մայրաքաղաքի ավերակների դիտումը, իմ և թե շատ այլ այցելողների մեջ առաջ բերեց խոր մտորումներ թե՛ հայ ժողովրդի և թե՛ ամբողջ մարդկության ճակատագրի մասին։

Այցելողներից շատերը արտահայտում են (մատյանում) նաև ազգայնական գաղափարներ։

Իմ կողմից ցանկանում եմ, որ բոլոր ժողովուրդները համակվեն ինտերնացիոնալ, հավասարության և եղբայրական գաղափարներով։

Դպրոցի վարիչ, կոսմոպոլիտ,
էսպերանտիստ Յան Բաուֆման
(Թարգմանություն ռուսերենից)

(Գիրք 2, թ. 110)

26

1909 թվականին փախտ. ունեցա երրորդ անգամ տեսնել Անի քաղաքի ավերակներն և ստանալ ներհակ տպավորություն. այն է առաջին և երկրորդ տեսության ժամանակ տեսա շատ կանգուն մնացորդներ, բայց սակավ արժեք։ Երրորդ անգամին տեսա սակավ հետ շինություն՝ այլ հայրենյաց բախտ համար շատ և շատ տխուր, վերակենդողության նախնական արվեստի և արհեստի շնորհիվ խոզարկության գերազնիվ ուսուցչապետ Նիկողայոս Մարի և ջանքով ճարտարապետ Թորոս Թորամանյանի նշանավորության գաղտնյաց և ծածկոնի բացատրությանն։ Ուստի գոհությամբ սրտի այցելելով ամեն քանգարաններն ուխտավոր հոգվով, հարգեցի հայտնված հնությունք և երկրպագեցի հայոց Գագիկ առաջին արքային ևս, վերադարձա՝ հավատալով թե ոչ միշտ ափսոսալի առարկայք կորչում են ավերակներում, այլ հրաշապես վերակենդանացնելով՝

[30] Մեծ հայաբնակ գյուղ Կարսի մարզում, Ալեքսանդրոպոլի (Լենինականի) երկաթգծի Բաշ-Կադիկլար կայարանի մոտ։

Անիի Ս. Փրկիչ եկեղեցին, կառուցված 1036 թվականին:

հարուցանում են միակողմությունից (անընթեռնելի բառ) իրենց բնիկ տերերին։

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց[31]

27

26 հուլիսի 1909 թ.

Անվո ավերակներն ասում են հայերին՝ ձեր պապերը հետևել են իրանց դարու իշխող քաղաքակրթական բարոյական գաղափարին և այս են արտադրել, որով դուք կարող եք պարծենալ. դուք էլ հետևեցեք ձեր դարու բարձրագույն գաղափարին, որ ձեր սերունդն էլ ձեր արտադրություններով կարողանա պարծենալ։

Ստեփանոս Տեր-Սարգսյանց[32]

(Գիրք 2, թ. 3)

28

3 հունիսի, 1912 թ.

Ջեմ ասում՝ եկա, տեսա, ողբացի։ Ու հայրենի ժողովրդի անցյալը յուր փառահեղությամբ կանգնած է ոչ միայն հայի, այլև օտարի առաջ։ Անցյալ կյանքը մեզ հաճախ տխրությամբ է գալիս ասելու՝ «Մեր պապերը Հռոմն են փրկել»։ Իսկ մենք, մեր այսօրվա ապրողներս, ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անում։ Մենք մեր պապերից միայն մի բան ենք վաստակել՝ դարերով կործանել հայրենի փառքը։ Իսկ ստեղծել փառք, եղածին ավելացնել նորը, այդ հեռու է դժբախտաբար մեզնից։ Հրճվանքով դիտեցի մի քանի անգամ դիտածս ու նոր հրապարակ եկած հնություններ, մտքով սլացա անցյալ դարերը ու առանց ողբալու, առանց հայի պատմության լալկանության համոզվեցի, որ անցյալում ստեղծագործող հայ ժողովուրդը, եթե այսօր դատապարտված է անգործության, անշուշտ, վաղը պիտի վերականգնի յուր անցյալ կուլտուրան կատարելու գործվող եվրոպական քաղաքակրթության պահանջներով։ Թող հայ ինտելիգենցիան դավերով ապրի և (ոխակալությամբ) վարակվի, այնուամենայնիվ արվեստ, կուլտուրա և քաղաքակրթություն ստեղծող ժողովուրդը, «աշխատանքը» յուր ճակատին դրոշմած հայ ժողովրդի տքնող մասը միշտ էլ առաջ կերթա առանց լքելու պատմական այլ բոլոր արհավիրքներից, որոնց նմանները եկել անցել են, բայց չեն ծածկել հայ աշխատանքի արդյունքը՝ հայ արվեստը, որի փառավոր ներկայացուցիչն է ավերված Անին։ Ջեմ հուսահատվում, հայ աշխատանքը գնահատվում է արդեն. դրան ապացույց ահա ձեզ գիտնական պ. Մառի անդուլ աշխատանքը։ Պ. Մառի նման աշխատանքի մարդը մի ազգի որդի չէ, նա համայն մարդկությանն է և հայ ժողովրդի հարազատ սերն էլ է վաստակում։ Թո՛ղ երկար ապրի մարդկության այդ որդին...։

«Ղարաբաղ»-ի խմբագրող՝
Սիմեոն Տեր-Միհեսյան
Օր. Մարիամ Գալստյան

(Գիրք 2, թ. 22)

29

26 հուլիսի 1909 թ.

Երբ (Հուլիսի 26-ին), հեռվում առաջին անգամ հորիզոնի վրայ երևացին Անվո ավերակները՝ ինձ տիրապետեց մի հուզմունք, որը ես ոչ մի կերպ չէի կարողանում բացատրել։ Երբ, ավելի ուշ, ես բախտ ունեցա դիտելու, ավելի մանրամասն, մեր նախնիքներից մեզ թողած ժառանգությունը և լսել հարգելի պրոֆեսոր Մառի բացատրությունները, միայն մի միտք, մի զգացմունք բևեռվել էր իմ ուղեղիս և սրտիս մեջը։

Եթե, չնայած ամենաաճախորդ հանգամանքներին, մեր նախնիքը դեռ այդ խավար ժամանակներում ստեղծեցին Անին, մենք՝ նրանց ժառանգները, այս լուսավոր ժամանակներում ընդունակ կլինե՞նք ստեղծելու նրա (անընթեռնելի բառ)։

Գրիգոր Գուրգենյանց[33]

(Գիրք 2, թ. 3)

30

12 օգոստոսի 1910 թ.

Տյառն ողորմությամբ բախտ ունեցա տեսնել Անին՝ Բագրատունյաց փառաց ոստանը, որու ավերակները և անոնց յուրաքանչյուր քարը կխոսեն ամեն ճշմարիտ հայու սրտին և կզարթուցանեն հույժ վշտոտ հիշատակներ։ Այս առթիվ ինձ համար պատիվ և ուրախություն եղավ տեսնել հայագետ և բնախույզ մեծ պրոֆեսոր պ. Մառ և ժիր ու պատվավոր ճարտարապետն պ. Թորոս Թորամանյանը, որոնց հաճելի տեսակցությունն վայելեցի ու իրենց բացատրությունն լսեցի նվիրական։

---

[31] *Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց (1837—1914), ականավոր եկեղեցական և հասարակական գործիչ։ Նրա միջոցներով և օժանդակությամբ է հրատարակվել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի հանրահայտ «Ազգապատում» աշխատության Ա հատորը։*

[32] *Ստեփանոս Տեր-Սարգսյանց, Մոսկվայի Լազարյան ճեմարանի երկարամյա դաստիարակ և դասատու։*

[33] *Գրիգոր Ջհանդիրի Գուրգենյան (1865—1937), ականավոր ինժեներ, մեծ ավանդ ունի դրած Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության գործում։ Տիրապետում էր մի քանի եվրոպական լեզուներին։*

Անիի նկատմամբ: Մասնավոր բախտավորությունն մէր նաև ինձ մոտ Ս. Էջմիածնի միաբաններեն բազմահմուտ պատմագետ, հնախույզ գիտնական Տ. Գարեգին վարդապետ Հովսեփյանի ընկերակցությունն էջմիածնեն մինչև Անի, որով ավերակները միասին այցելեցի և անոնց պատմությունն ու բացատրությունը լսեցի նորին պատվական հայրութենեն: Այս այցելության առթիվ ճանչցա Անիի վանահայր Տ. Միքայել վարդապետ Տ. Մինասյանը, որ բարի և հյուրասեր եկեղեցականի մը տպավորություն թողուց:

Պատրիարքական տեղապահ
Ս. Երուսաղեմի՝
Դանիել ծայրագույն վարդապետ Հակոբյան

(Գիրք 2, թ. 7)

31

24 հունիսի 1911 թ.

22—24 Հունիսի 1911 թվի Անի ավերակներ օդապարիկ արեոստատով կարսից պրակտիկայի՝ փորձնական աշխատանքի է եկել Կովկասի առաջին օդադնացների վաշտը: Վաշտը բաղկացած էր՝ հրամանատար փոխ-գնդապետ Իլյին, վաշտի ավագ սպա կապիտան Խանաև, վաշտի համհարզ, սդյուտանտ պորուչիկ Սկրաբին, կրտսեր սպա պորուչիկ Գրիգորով, մեխանիկ Դուն, բժիշկ Յիցիկով և 106 զինվորներ: Պրոֆեսոր Մառը, նրա օգնականները և վանահայր Միքայելը սիրալիր ընդունեցին մեզ և թե՛ սպաներին, թե՛ զինվորներին տալիս էին մանրամասն բացատրություններ: Ամբողջ վաշտը հայտնում է նրանց խորին շնորհակալություն սիրալիր ընդունելության համար:

Հունիսի 23-ին սպաները բարձրացան օդապարիկի վրա մինչև 400 մետր և լուսանկարեցին Հայաստանի երբեմնի սքանչելի մայրաքաղաք Անիի ավերակները:

(Տորրագրություններ)

(Թարգմանություն ռուսերենից)

(Գիրք 2, թ. 68)

32

13 հունվարի 1913 թ.

1913 թ. Հունվարի 13-ին, երբ ես այցելեցի այս երբեմնի հայկական մեծ մայրաքաղաքը և այն, ինչ որ ես այստեղ տեսա, ինձ վրա, որպես զգայուն մարդու վրա, թողեցին ճնշող և շշմեցնող տպավորություն: Ես հիացած էի այն արվեստով, որին տիրապետել են մեր հայերը այն ժամանակ, երբ մեզ մոտ մշակույթը կանգնած էր ամենացածր մակարդակի վրա և այդ բոլորը խորտակված, կործանված պատերազմների ու երկրաշարժների հետևանքներով: Ինչքա՜ն դժվար է ու ծանր է այդ բոլորը դիտել: Ցավում եմ, որ ես ընտրեցի անհաջող ժամանակ (ձմեռը), որպեսզի մանրազնին ուսումնասիրեի հարգելի պրոֆեսոր Մառի կատարած պեղումները, որին ի սրտե ցանկանում եմ մեծ հաջողություններ պեղելու նոր նյութեր, որոնք լինելու են մեզ և մեր ժառանգների համար թանկագին և սրբազան հուշարձաններ: Հուսով եմ, որ մի անգամ ևս, բայց արդեն ամառը, իմ կինեմատոգրաֆը հետս վերցրած կայցելեմ ավերակները, որպեսզի նկարահանեմ այն բոլորը, ինչ որ ձյան տակ էր և հնարավոր չեղավ ոչ միայն նկարահանելու, այլ նույնիսկ դիտելու: Խորհուրդ եմ տալիս հնության սիրահարներին այցելել այս ավերակները, իսկ մանավանդ մեզ՝ ռուսներիս: Չէ՞ որ այս պեղումները քիչ են զիջում հռչակավոր Պոմպեի պեղումներին: Ընդունելությունը այստեղ սիրալիր և հյուրասեր Տեր-Մինասյանց վարդապետի կողմից շատ լավ էր, որին ես շատ եմ պարտական և շնորհակալ: Ի սրտե ցանկանում եմ, որ տարվող պեղումները պսակվեն հաջողությամբ և այստեղ գտնվող փոքր թանգարանը վերածվի փլվածքներից մաքրված քաղաք-թանգարանի:

Ֆրիդրիխ Կոնստանտինովիչ Վերիգո Դարովսկի
Մոսկվա

(Թարգմանություն ռուսերենից)

(Գիրք 2, թ. 96)

33

22—23 հունիսի 1913 թ.

Կարելի է նկարագրել ինչ որ տեսել եմ, բայց բառեր չկան, շատ թույլ, անգույն դուրս կգան այն զգացմունքները, ինչ որ վերապրեցի դիտելով Հայաստանի նախկին մայրաքաղաքը և Անիի թանգարանը: Ցավում եմ, որ ծնվել ենք 20-րդ դարում: Ցանկանում եմ, որ Մառը և իր աշխատակիցները պեղեն ավելի հետաքրքիր իրեր ու մասունքներ, որոնք էլ ավելի ցայտուն կերպով կարտացոլեն Հայաստանի բարգավաճման դարաշրջանը: Ի վերջո հայտնում եմ ծերունի վարդապետին անկեղծ շնորհակալություն սրտաբաց ընդունելության համար:

Վլ. Սավելյև
Գեոսիմոն Տրիանտաֆիլով
1913 թ. 27—29 կազմակերպվող գյուղատնտեսական ցուցահանդեսի ղեկավար և աշխատակից:

Ալեքսանդրոպոլ

(Թարգմանություն ռուսերենից)

(Գիրք 2, թ. 21)